A-PDF Image To PDF Demo. Purchase from www.A-PDF.com to remove the watermark

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

«ԲԱՆԱՁԵՎ ՄԵԴԻԱ»

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 5- ԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպությունը ստեղծվել է (վերակազմակերպվել է) «27» օգոստոսի 2010 թ.:

Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03Ա089024:

1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպության նպատակներն են.

1. Նախադրյալներ ստեղծել բազմակողմանի տեղեկատվությունը հասարակության համար հասանելի դարձնելու համար,

2. Նպաստել խոսքի ազատության միջազգային նորմերի հաստատմանը Հայաստանում,

3. Հայաստանյան ԶԼՄ-ներով մատուցվող տեղեկատվությունը դարձնել ավելի բազմակողմանի, խորը և ներառական

4. Նպաստել հայաստանյան ԶԼՄ-ների մասնագիտական պատրաստվածությանը

5. Նպաստել լրատվական բովանդակության ստեղծման ստեղծագործական մոտեցումների զարգացմանը

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպության խնդիրներն են.

1. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել երիտասարդների՝ որպես բաց հասարակության կառուցման և բարեփոխման գործում առավել ընկալունակ և դինամիկ տարրի հետ աշխատանքին,

2. իր նպատակների իրագործման համար պատրաստել ֆիլմեր, հաղորդումներ և մասնագիտական գրականությունը ներբեռնել համացանց,

3. Կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ կարիերայի տարբեր փուլերում գտնվող լրագրողների, պրոդյուսերների, խմբագիրների և կառավարիչների համար և այլն:

4. Նախաձեռնել լրագրողական հետաքննություններ ու հետազոտություններ՝ ներգրավվելով տեղական և միջազգային դոնոր կազմակերպություններին՝ բարձր որակի լրագրողական բովանդակություն ստեղծելու համար:

1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.

1. Արտակ Ալեքսանյան, **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ,

2. Արտյոմ Լևոնյան, **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպության քարտուղար,

3. Մանու Իրիցյան, **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպության անդամ

4. Գնել Նալբանդյան, **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպության անդամ

5. Հրայր Մեհրաբյան, **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպության անդամ:

1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպության գործունեության ոլորտներն են

1. Հեռուստատեսություն և հեռուստատեսային արտադրանք. (Բանաձև հաղորդաշար, Հատուկ Ռեպորտաժ, Բրիֆինգ)

2. Տպագիր և պարբերական մամուլ. (Նյումեգ ամսագիր)

3. Օնլայն ռեսուրսներ, ինտերնետային պարբերականներ ու մասնագիտական կայքեր (interpress.am, newmag.am)

4. միջազգային կազմակերպություններ և այլն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2.1. Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի իրականացման համար հիմք է հանդիսացել

1. Համաշխարհային մամուլի Հայաստանին ու տարածաշրջանին վերաբերող լավագույն հոդվածների և վերլուծությունների հավաքագրում, թարգմանություն և հրապարակում հատուկ մասնագիտացած կայքում,

2. Լրագրողների վերապատրաստում և մաստեր-կլասսեր արդեն գործող պրոֆեսիոնալների համար,

3. Ուսուցողական բովանդակության պատրաստում լրագրողների համար,

4. Հատուկ ուսումնասիրություններ՝ մասնագիտական դաշտի կարիքները գնահատելու համար:

2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարում կազմակերպության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում.

1. ԱՄՆ դեսպանատան ժողովրդավարության փոքր դրամաշնորհների ծրագիր,

2. Անդամավճարներ և վարձավճարներ թրեյնինգների համար,

3. Այլընտրանքային մեդիա ռեսուրսներ Հ/Կ և Եվրասիա հիմնադրամ,

4. Միջազգային կազմակերպություններ,

5. Հայաստանի երիտասարդական հիմնադրամ:

2.2. Ծրագրի իրականացման ժամկետները

2015-2020թթ

2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 5 տարում **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպությունը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1. www.interpress.am կայքի գործարկում և անխափան աշխատանք,

2. Լրագրողների վերապատրաստում և մաստեր-կլասսեր,

3. Ուսուցողական բովանդակության պատրաստում լրագրողների համար,

4. Մարզային լրագրողների վերապատրաստում և այլն:

2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ **«Բանաձև Մեդիա»** տեղեկատվական հասարակական կազմակերպությունը կդառնա Հայաստանի մեդիաոլորտի և պրոֆեսիոնալ համայնքի կարիքները գնահատող և սպասարկող հանգուցային կազմակերպություններից մեկը, որն իր կարողություններով և մարդկային ռեսուրսներով կկարողանա սպասարկել հայկական ԶԼՄ-ներին որակյալ աշխատուժով և գործիքակազմով՝ Հայաստանի հասարակության համար ավելի որակյալ և անհրաժեշտ ինֆորմացիա գտնելու և ներկայացնելու գործում:

«Բանաձև Մեդիա» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ — Արտակ Ալեքսանյան